

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/2

12 ապրիլի 2016 թ.

Քննարկվեց «Բեկկարիա» ՍՊԸ 14.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.02.2016թ-ի թիվ 315391/01 որոշման դեմ:

«Բեկկարիա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

2016թ-ի մարտի 3-ին փոստային առաքմամբ «Բեկկարիա» ՍՊԸ տնօրենը ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի թիվ 31539/01 որոշումը՝ իր նկատմամբ 20.000 դրամի վարչական տուգանք նշանակելու մասին՝ 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը ժամկետից ուշ ներկայացնելու համար:

Ներկայացվում է 20.01.2016թ-ին, օրենքով նախատեսված ժամկետում ներկայացված հաշվետվության փոստային առաքման անդորրագիրը, ինչպես նաև «Բեկկարիա» ՍՊԸ-ում կատարված ստուգման և չհայտնաբերված խախտումների վերաբերյալ 27.01.2016թ-ին կազմված թիվ 5013066 տեղեկանքի պատճենը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.02.2016թ-ի թիվ 315391/01 որոշումը, նկատի ունենալով, որ 2015թ-ի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը ներկայացվել է ժամանակին, այն է՝ 20.01.2016թ-ին:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 12.02.2016թ-ի 0865 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզել է, որ «Բեկկարիա» ՍՊԸ տնօրեն Աշոտ Ավետիսյանը սահմանված ժամկետից ուշ է ներկայացրել 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, որի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 23.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 315391/01 որոշումը (այսուհետ՝ Որոշում) Աշոտ Ավետիսյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Բեկկարիա» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Ավետիսյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 20.01.2016թ-ին, ներկայացրել է 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, ինչի

մասին է վկայում գործում առկա փոստային ծառայության կողմից տրամադրված համապատասխան կտրոնը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության ներկայացուցիչը նշեց, որ «Բեկկարիա» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Ավետիսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ծրարի (որով ներկայացվել է վերոգրյալ հաշվարկը) վրա առկա կնիքի համաձայն այն փոստին է հանձնվել 21.01.2016թ-ին: Ընդ որում, մինչ վարչական տույժի նշանակելը, Աշոտ Ավետիսյանը ծանուցվել է հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի քննությանը մասնակցելու համար, սակայն պատշաճ ծանուցված լինելով հանդերձ նա չի ներկայացել գործի քննությանը և չի ներկայացրել վերոգրյալ հաշվարկը 20.01.2016թ-ին փոստին հանձնված լինելու վերաբերյալ ապացույց: Նման պայմաններում վարչական մարմինը զրկված է եղել կողմի համար բարենպաստ որոշում կայացնելու հնարավորությունից:

Հարկ է նշել, որ թե նշված ծրարի և թե գործում առկա փոստային ծառայության կտրոնի վրա առկա կոդերը (RR 1952228855AM) նույնական են: Նշված հանգամանքը հիմնավորում է 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը 20.01.2016թ-ին փոստին հանձնված լինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործում առկա փոստային ծառայության կտրոնը հիմնավորում է 2015թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը «Բեկկարիա» ՍՊԸ-ի կողմից 20.01.2016թ-ին ներկայացված լինելու փաստը, հետևապես Որոշման մեջ նշված արարքի բացակայությամբ պայմանավորված գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.02.2016թ-ի թիվ 315391/01 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

